ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/5523-2026

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Շուկայի վերահսկողության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Կ-1194-18.11.2025-ՏՏԳՇ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. Հաշվի առնելով, որ «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասն արդեն իսկ պարունակում է 31-րդ կետ՝ անհրաժեշտ է շտկել հերթական համարակալումը «31» թիվը՝ փոխարինելով «36» թվով:

2. Նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրը առաջարկվում է հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, որի համաձայն՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքի 158-րդ հոդվածը նախատեսվում է լրացնել նոր՝ 12[1]-ին մասով, որի 3-րդ պարբերության «Սույն հոդվածով» բառերը առաջարկվում է փոխարինել «Սույն մասով» բառերով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դրանով

վարչական պատասխանատվություն է նախատեսվում ոչ թե Օրենսգրքի 158-րդ հոդվածով նախատեսված բոլոր արարքները, այլ միայն լրացվող նոր՝ 12[1]-ին մասով նախատեսված արարքը կրկին կատարելու համար:

2. 2025 թվականի նոյեմբերի 13-ի «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-380-Ն օրենքի ընդունմամբ հանվել է հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում գործունեությունը փակ շրջանառու համակարգով իրականացնելու պարտադիր պահանջը:

Ելնելով վերոգրյալից, անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 63.2-րդ հոդվածի 6-րդ մասը:

Ըստ այդմ առաջարկում ենք Նախագիծը լրացնել նոր 3-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 3. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 63.2-րդ հոդվածի 6-րդ մասը:»:

3. Առաջարկվում է «Հոդված 3» բառերը փոխարինել «Հոդված 4» բառերով՝ հաշվի առնելով, որ նախագիծը նախատեսվում է լրացնել նոր Հոդված 3-ով: Ինչպես նաև նոր լրացված Հոդված 3-ի համար ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

«Շուկայի վերահսկողության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկներ չկան:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ